Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունիսի 26-ի N 3/3.8-1/9006-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 25-ի N ՎՄ/3-4/7571-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «ՄԻ.Օ.ԷՅ.ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-060-Ա և 2012 թվականի մայիսի 18-ի N Մ-379-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՏՈՍՊ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01803966) 2013 թվականի հունիսի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ապրանքների ձեռքբերում՝ 3,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 հունիսի 2013 թվականի N Մ- 532 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇԵՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Հայաստանի մանուկների հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի 2013 թվականի հունիսի 20-ի N 1945 գրությունը, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի.Օ.Էյ.Էֆ» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 5-րդ և 7-րդ կետերը լրացնել «ՀՀ Արմավիրի մարզի Սարդարապատի և Հացիկի համայնքներ» բառերով (լրամշակված ծրագիրը կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի ու Արմավիրի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի մանուկներ հիմնադրամի կողմից

19 Հունիսի 2013թ.

ՀՀ գյուղական ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ - ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ					
1	Ծրագրի անվանումը	Հայաստանի Հանրապետության գյուղական Համայնքների Զարգացում			
2	Ծրագրի նպատակները	Գյուղական վայրերի զարգացման ծրագիրը շարունակությունն է 2006թ. մարտի 28-ին ՀՀ առաջվարության Բարեգործական Ծրագրերը Համակարգող Հանձնաժողովի կողմից հաստատված N Մ-192-Ա որոշման, որի հիման վրա նպատակ է պահպանել կառուցած ենթակառուցվածքները և շարունակել կառուցել և զարգացնել սոցիալ տնտեսական կյանքը Հայաստանի լսողականները գյուղերում:			
3	Բարեգործները և ֆինանսավորման աղբյուրները	Children of Armenia Fund (COAF) New-York USA:			
4	Ծրագրի կատարողը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ, ՀՀ, Երևան 0001, Հյուսիսային պողոտա 1, 8-րդ հարկ, 24 սենյակ, ՀՎՀՀ 02569972, «Ամերիաբանկ» ՓԲԸ, հ/հ 15700 10241550100:			
5	Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Արմավիրի մարզի Էմեազգ, Ղալաբիկ, Լորդի, Մյասնիկյան, Զարակերտ, Եմինկ, Երվանդաշատ, Բարսեղյան, Հուշակերտ, Սարդարապատ և Հացիկ գյուղերը և Արագածոտնի մարզի Մրտեմի և Արագածական գյուղերը:			
	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն 3 (երեք) տարիների համար կազմում է 3.000.000 (երեք միլիոն) ԱՄՆ դոլար: 01.01.2011 - 31.12.2011թթ տարվա համար նախատեսված է 800 000 (ութ հարյուր հազար) ԱՄՆ դոլար: 01.01.2012 - 31.12.2012 թթ տարվա համար նախատեսված է 1 000.000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար: 01.01.2013 - 31.12.2013 թթ տարվա համար նախատեսված է 1 200.000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ԱՄՆ դոլար:			
		Տնտեսական - 155.000 (Մեկ հարյուր հիսունհինգ հազար) ԱՄՆ դոլար			

20.8/9.1

Ծրագրի բյուջեն համառոտ ըստ
ծրագրերի 01.01.2011-31.12.2011թթ
ժամանակահատվածի համար:
Համայնքների բնակիչներին
մատուցվող բոլոր ծառայությունները
լինելու են ԱՆՎՃԱՐ



	1	Հաջող բիզնես - 7.000 ԱՄՆ դոլար
	2	ՓՄՁ զարգացման ֆոնդ - 40.000 ԱՄՆ դոլար
	3	Մեքենատրակտորային պարկ - 65.000 ԱՄՆ դոլար
	4	Արվեստի կենտրոնի զարգացում 21.000 ԱՄՆ դոլար
	5	Աշխատավարձ և հարկեր - 22.000 ԱՄՆ դոլար
2		Ենթակառուցվածքներ - 200.000 (երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլար
	1	Շինարարական աշխատանքներ - 200.000 ԱՄՆ դոլար
3		Կրթական - 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ԱՄՆ դոլար
	1	Ամառային ճամբար - 30.000 ԱՄՆ դոլար
	2	Ուսուցիչների մասնագիտական զարգացում - 30.000 ԱՄՆ դոլար
	3	Արտադասարանական խմբակներ - 50.000 ԱՄՆ դոլար
	4	Ղալոցների տեխնիկական հագեցում - 10.000 ԱՄՆ դոլար
	5	Մուկորոդների համար ուսումնական էքսկուրսիաների, այցերի, միջոցառումների կազմակերպում - 10000 ԱՄՆ դոլար
4	6	Աշխատավարձ և հարկեր - 20000 ԱՄՆ դոլար
		Առողջապահական - 105.000 (մեկ հարյուր հինգ հազար) ԱՄՆ դոլար
	1	Բժիշկների, բուժքույրերի մասնագիտական զարգացման ծրագրեր - 40.000 ԱՄՆ դոլար


Մ-8/9.1

	2	Դեղորայքի, սարքավորումների տրամադրում - 65.000 ԱՄՆ դոլար
	5	Երեխայի և ընտանիքի աջակցություն - 30.000 (երեսուն հազար) ԱՄՆ դոլար
		1 Սոցիալ-հոգեբանական ծառայությունների մատուցում 13.000 ԱՄՆ դոլար
		2 Աշխատավարձ և հարկեր - 12.000 ԱՄՆ դոլար
		3 Տրանսպորտային ծախսեր - 5000 ԱՄՆ դոլար
	6	Կազմակերպչական ծախսեր - 160.000 (Մեկ հարյուր վաթսուն հազար) ԱՄՆ դոլար
		1 Գրասենյակի վարձակալություն - 50.000 ԱՄՆ դոլար
		2 Աուդիտ, իրավաբանական ծառայություններ - 15.000 ԱՄՆ դոլար
		3 Գրասենյակային ծախսեր - 10.000 ԱՄՆ դոլար
		4 PR ծախսեր - 20.000 ԱՄՆ դոլար
		5 Աշխատավարձ և հարկեր - 65.000 ԱՄՆ դոլար
7		Բարեգործություն ստացողը ՀՀ Արմավիր մարզի Լեռնագոգ, Ղալարիկ, Մյասնիկյան Բարակերտ, Շենիկ, Երվանդաշատ, Բաղրամյան, Հուշակերտ, Սարգսյան և Հաջիկ համայնքների և Արագածոտնի մարզի Արտենի և Արագածական համայնքների երեխաները և նրանց ընտանիքի անդամները, կրթական և բժշկական հաստատությունները, տարածքային ինքնակառավարման մարմինները և նրանց կից գործող սոցիալ-տնտեսական ծառայություն մատուցող կազմակերպությունները:
8		Ծրագրի իրականացման տևողությունը 01.01.2011թ. - 31.12.2013թ.
9		Միջոցառումները (ըստ փուլերի, եթե այդպիսիք են առկա) և առանձնացնել նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ դեպքերում Միջոցառումները ըստ փուլերի յուրաքանչյուր տարվա կտրվածքով կներկայացվի մանրամասն բյուջե յուրաքանչյուր տարվա դեկտեմբերին ամսին 01.01.2012-31.12.2012թթ. 01.01.2013-31.12.2011 թթ.


Մ-8/9.1

10	Զեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագրերը, ծավալները, նախատեսվող գինը		Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել սննդամթերք, շինանյութ, սանտեխնիկա, կահույք, գրասենյակային ախտույթներ, համակարգչային տեխնիկա, նյութեր: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կնքել պայմանագրեր կապալառուների հետ՝ նախագծային, շինարարական, հսկողական աշխատանքների կատարման համար, կրթական, առողջապահական, հետազոտական, սոցիալական ծրագրերի իրականացման համար, փորձագետների մասնագիտական վերահսկողական, ուսուցողական ծառայությունների: Մատակարարները և կապալառուները կընտրվեն մրցութային կարգով: Արտեղևից բարեգործական բեռների ներմուծում:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր		Ծրագրի կազմակերպչական ծախսերը 2012 և 2013 թթ -ի համար կներկայացվեն յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի ամսին: Ծրագրի իրականացման հետ կապված ծախսերը 01.01.2011-31.12.2011 թթ կտրվածքով՝ Կազմակերպչական ծախսեր - 160,000 (Մեկ հարյուր վաթսուհազար) ԱՄՆ դոլար 1 Գրասենյակի վարձակալություն - 50,000 ԱՄՆ դոլար 2 Աուդիտ, իրավաբանական ծառայություններ - 15,000 ԱՄՆ դոլար 3 Գրասենյակային ծախսեր - 10,000 ԱՄՆ դոլար 4 PR ծախսեր - 20,000 ԱՄՆ դոլար 5 Աշխատավարձ և հարկեր - 65,000 ԱՄՆ դոլար
12	Համագործակցությունը կետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ		Նախատեսվում է համագործակցել ՀՀ նախարարությունների, մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը		Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է ԱՄՆ Children of Armenia Fund (COAF) բարեգործական հիմնադրամի և ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ներկայացուցիչների կողմից:

Հայաստանի մանուկների հիմնադրամի գործադիր տնօրեն
Մերոբ Խաչատրյան



մ. 8/9.1



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 հունիսի 2013 թվականի N Մ- 533 - Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N Մ-431-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

(«Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունիսի 26-ի N 3/3.8-1/9014-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 25-ի N ՎՄ/3-4/7565-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 29-ի որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն)» N Մ-431-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «2,583,000 դրամի չափով» բառերը, փոխարինել «2,777,600 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 հունիսի 2013 թվականի N Մ- 534 - Ա
քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՐՄԻՏԵ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ»
«ՄՈՒՐԱԳԱՆ» ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՏԱՆԻՔԻ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունիսի 7-ի N 3/3.8-1/7870-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի հունիսի 10-ի N 02/3259-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հունիսի 6-ի N ԴԴ/22/6411-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 11-ի N ՎԱ/3-8/6920-13 եզրակացությունները, **ո թ ո չ ու մ է.**


1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 250,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Երևանի պետական բժշկական համալսարանի «Մուրացան» հիվանդանոցային համալիրի տանիքի վերակառուցման նախագծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նախատեսվող «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հազարաշեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01816381) 2013 թվականի մայիսի 20-ին կնքված N ՀՀ/Ն-03/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 250,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ:

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան



«04» հունիսի 2013թ.

«Երևանի Պետական Բժշկական համալսարանի «ՄՈՒՐԱՑԱՆ»
հիվանդանոցային համալիրի տանիքի վերակառուցման նախագծում»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Բարելավել Երևանի Պետական Բժշկական համալսարանի «ՄՈՒՐԱՑԱՆ» հիվանդանոցային համալիրի հիվանդների և բուժանձնակազմի բուժման և աշխատանքի պայմանները
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ՀՀ ք. Երևան, առողջապահության բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 250.000,00 դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	Երևանի Պետական Բժշկական համալսարանի «ՄՈՒՐԱՑԱՆ» հիվանդանոցային համալիրը

2

7.	Ծրագրի իրականացման տեսլությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ մայիսի 20-ից մինչև 2013թ. օգոստոսի 20-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Հազարաշեն» ՄՊԸ-ի կողմից Երևանի Պետական Բժշկական համալսարանի «ՄՈՒՐԱՑԱՆ» հիվանդանոցային համալիրի երկհարկանի մասնաշենքի տանիքի վերակառուցման նախագծում՝ 250.000,00 առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Կրթության Գիտության և մշակութային հարցերի նախարարության հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը



2/1



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 հունիսի 2013 թվականի N Մ - 535 - Ա
քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱԶԳՈՂ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ԱՆՎԱՆ N
169 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԶԵՌՔԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունիսի 21-ի N 3/3.8-1/8735-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի հունիսի 21-ի N 02/3571-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի հունիսի 19-ի N 03/07-1/6650-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 21-ի N ՎՄ/3-8/7386-13 եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ է:

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 178,333 դրամ ընդհանուր արժողությամբ «Երևան քաղաքի Հովհաննես Շիրազի անվան N 169 հիմնական դպրոցի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

անհատ ձեռներեց Վահագն Մելիք-Մարտիրոսյանի հետ (ՀՎՀՀ՝ 21304935) 2013 թվականի հունիսի 5-ին կնքված՝ N ԱՎ-Մ-04/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված սարքավորումների ձեռքբերում՝ 178,333 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի

Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:


4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան



«14» հունիսի 2013թ.

«ՀՀ Երևան քաղաքի Հովհաննես Շիրազի անվան թիվ 169 հիմնական դպրոցի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում»

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ապահովել ՀՀ Երևան քաղաքի Հովհաննես Շիրազի անվան թիվ 169 հիմնական դպրոցը անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Երևան քաղաք, կրթության բնագավառ

2

5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 178.333,00 ՀՀ դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Երևան քաղաքի Հովհաննես Շիրազի անվան թիվ 169 հիմնական դպրոցը
7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ հունիսի 05-ից մինչև 2013թ. սեպտեմբերի 05-ը
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Անհատ ձեռներեց Վահագն Մելիք-Մարտիրոսյանից մեկ համակարգչի և մեկ մոնիտորի ձեռքբերում և անհատույց հանձնում՝ 178.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

8/2



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 հունիսի 2013 թվականի N Մ - 536 - Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱԳՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ԵՐԵՒԱՆԵՐԻ ՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ԿԱՀԱՎՈՐՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունիսի 14-ի N 3/3.8-1/8371-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի հունիսի 17-ի N 02/3422-13, Հայաստանի Հանրապետության աշխարհաբանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի հունիսի 12-ի N ՖԲ/ԱՆՄ-4/4332-13, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 14-ի N ՎՄ/3-8/7098-13 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի հունիսի 13-ի N 01/2788-13 եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.


1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 10,062,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2013 թվականի հունիսի 7-ին կնքված՝ N ՀՀ-Կ-09/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում՝ 10,062,500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխարհաբանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան



«07» հունիսի 2013թ.

« ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի կահավորում »
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Բարելավել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի (մանկատան)երեխաների կեցության պայմանները
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, սոցիալական բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 10.062.500,00 դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ը

2

7.	Ծրագրի իրականացման տեղությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ հունիսի 07-ից մինչև 2013թ. հոկտեմբերի 07-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի համար ներկայացված պայմանագրի Հավելված 1-ի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում և անհատույց հանձնում՝ 10.062.500,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Շիրակի մարզպետարանի հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ

**28 հունիսի 2013 թվականի N Մ - 537 - Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿԻՐԱՆՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՐԱՆՈՑ ԶՐԱՆՑՔԻ ՎԵՐԱՆՈՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունիսի 11-ի N 3/3.8-1/8014-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի հունիսի 10-ի N 02/3258-13, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2013 թվականի հունիսի 12-ի N 07/07.1/3083-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 11-ի N ՎՄ/3-4/6925-13 եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ է:

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 169,823,547 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կիրանց համայնքի Սրանոց ջրանցքի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Պատեքս-գազ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03527967) 2013 թվականի մայիսի 14-ին կնքված՝ N ՀՀ/Ջ-01/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամատակարարման համակարգի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 167,223,547 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00012859) 2013 թվականի մայիսի 14-ին կնքված՝ N ՀՀ-02/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է

հեղինակային հսկողության իրականացում՝ 1,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.


3) «Շինպրոգրես» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00099713) 2013 թվականի մայիսի 14-ին կնքված՝ N ՀՀՏՀ-02/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական հսկողության իրականացում՝ 1,600,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան

«04» հունիսի 2013թ.

**«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կիրանց համայնքի
Սրանոց ջրանցքի վերակառուցում»
ԾՐԱԳԻՐ**

1.	Ծրագրի նպատակը	Վերականգնել ՀՀ Տավուշի մարզի Կիրանց համայնքի Սրանոց ջրանցքը
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ՀՀ Տավուշի մարզ, Կիրանց գյուղ, ջրամատակարարման բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 169.823.547,00 դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Տավուշի մարզի Կիրանց գյուղի համայնքը
7.	Ծրագրի իրականացման տեւողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ մայիսի 14 -ից մինչև 2014թ մարտի 14-ը:

2

8.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը	«Պառեքս-գազ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Տավուշի մարզի Կիրանց համայնքի Սրանոց ջրանցքի վերակառուցում 167.223.547,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: «ՀԱՅՋՐՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-ի կողմից վերականգման աշխատանքների իրականացման հեղինակային հսկողություն՝ 1.000.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: «ՇԻՆՊՐՈԳՐԵՍ» ՓԲԸ-ի կողմից վերականգման աշխատանքների իրականացման տեխնիկական հսկողություն՝ 1.600.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

8/4



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունիսի 2013 թվականի N Մ - 538 - Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունիսի 10-ի N 3/3.8-2/7956-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հունիսի 6-ի N ԴԴ/22/6412-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 11-ի N ՎՄ/3-4/6922-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Գերմանիայի հայ բժշկական ասոցիացիայի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված 2 խմբաքանակ դեղորայքի (34 տեղ, 497.5 կգ ընդհանուր քաշով, 3,559.95 եվրո արժողությամբ և 1 տեղ, 1.5 կգ ընդհանուր քաշով, 34.05 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ընդհանուր ծախսերը կազմել են 327.17 եվրո, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռն ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


**28 հունիսի 2013 թվականի N Մ - 539 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունիսի 21-ի N 3/3.8-2/8740-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 24-ի N ՎՄ/3-4/7485-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Հայկ Բալայանի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեոնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված մանկական բակային խաղահամալիրների (50 տեղ, 1500 կգ ընդհանուր քաշով, 6860 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ընդհանուր ծախսերը կազմել են 4067.56 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռն ստանալուց հետո հանձնվելու է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունիսի 2013 թվականի N Մ- 540 - Ա
քաղ. Երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային
կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013
թվականի հունիսի 12-ի N 3/3.8-2/8205-13 և Հայաստանի Հանրապետության կառավարության
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 14-ի N ՎՄ/3-4/7069-13
եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Թբիլիսիի կենդանաբանական այգու կողմից «Երևանի կենդանաբա-
նական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված
կենդանիները (5 տեղ, 300 կգ ընդհանուր քաշով, 2500 լարի արժողությամբ, որից
բեռնափոխադրման ծախսերը կազմում են 100,000 դրամ, «Արարատյան» տարածաշրջանային
մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի
«Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից
իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում»
ծրագրի մասին» N Մ-803-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունիսի 2013 թվականի N Մ- 541 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 5-Ի N Մ-218-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՈՒ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի հունիսի 10-ի N 3/3.8-2/7965-13 և Հայաստանի Հանրապետության կառավա-
րությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 11-ի N ՎՄ/3-4/6923-
12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք
բերված օդափոխության պարագաները (1 տեղ, 293.70 կգ ընդհանուր քաշով, 4,530 եվրո
արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 438,900 դրամ, «Արարատյան»
տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013
թվականի ապրիլի 5-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից
իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և
ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-
218-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


28 հունիսի 2013 թվականի N Մ- 542 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի հունիսի 20-ի N 3/3.8-2/8659-13, Հայաստանի Հանրապետության առողջապա-
հության նախարարության 2013 թվականի հունիսի 17-ի N ԴԴ/22/6838-13 և Հայաստանի Հանրա-
պետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի
հունիսի 21-ի N ՎՄ/3-4/7389-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Շվեյցարիայից Ցյուրիխի մանկական համալսարանական
հիվանդանոցի պրոֆեսոր Մարկոս Վեյսի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական
բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված նորածնային տրախտեալ խողովակները
(1 տեղ, 2.32 կգ ընդհանուր քաշով, 100 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը
կազմում են 60 շվ. ֆրանկ, «ՄՓԼՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական
բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող
«Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկատոցիական զարգացման
աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա
որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն
և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունիսի 2013 թվականի N Մ- 543 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N Մ-120-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի հունիսի 6-ի N 3/3.8-1/7826-13 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 10-ի N
ՎՄ/3-4/6852-13 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության
կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն
անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի
28-ի «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, Ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Նախաձեռնություն հանուն երեխայի
առողջության և կրթության» N Մ-120-Ա որոշմամբ (2012 թվականի մարտի 14-ի N Մ-161-Ա
որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի
զգալի նշանակություն՝

«Ֆլեշ» ՀԶ ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2013 թվականի մայիսի 22-ին
փոխանցման հաշիվ-ֆակտուրայում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի
ծեղքերում՝ 1,001,100 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունիսի 2013 թվականի N Մ- 544 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N Մ-120-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)

(«Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի հունիսի 6-ի N 3/3.8-1/7827-13 և Հայաստանի Հանրապետության կառավա-
րությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 11-ի N ՎՄ/3-4/6924-
13 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության
կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն
անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի
28-ի «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Նախաձեռնություն հանուն երեխայի
առողջության և կրթության» N Մ-120-Ա որոշմամբ (2012 թվականի մարտի 14-ի N Մ-161-Ա
որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն
զգալի նշանակություն՝

1) «Սամօջախ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08414357) 2013 թվականի մայիսի 24-ին
կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ապրանքների
մատակարարում՝ 3,242,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Սամօջախ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08414357) 2013 թվականի մայիսի 29-ին
կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ապրանքների
մատակարարում՝ 1,741,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ա.ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունիսի 2013 թվականի N Մ- 545 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-178-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի հունիսի 6-ի N 3/3.8-1/7822-13 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 10-ի N
ՎՄ/3-4/6853-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության
կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն
անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգոր-
ծական ծրագրերի, համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Սեյվ դը
չիլդրեն ֆեդերեյշն, Ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան
մասնաճյուղի կողմից իրականացվող «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և
կրթության» N Մ-178-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար
ունի զգալի նշանակություն՝

«Ֆլեշ» ՀՁ ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2013 թվականի մայիսի 22-ին փոխանց-
ման հաշիվ-ֆակտուրայում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի ձեռքբերում՝
897,700 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետա-
կան եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունիսի 2013 թվականի N Մ- 546 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 29-Ի N Մ-195-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի հունիսի 6-ի N 3/3.8-1/7846-13 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 11-ի N ՎՄ/3-
4/6921-13 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության
կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն
կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 29-ի «Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ»
հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Հատուկ կարիքներով
երեխաների համար աղետների ռիսկերի նվազեցում» N Մ-195-Ա որոշմամբ հաստատված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պոժտեխնիկա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01013653) 2013 թվականի մայիսի 23-ին
կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կրակմարիչների
ծեռքերում՝ 1,487,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 հունիսի 2013 թվականի N Մ- 547 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
17-Ի N Մ-357-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ
ՄԱՍԻՆ («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունիսի 11-ի N 3/3.8-1/8013-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 14-ի N ՎՄ/3-4/7068-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունի համայնքի կովերի մթերատվության բարձրացում ցեղատեսակի բարելավման միջոցով» ծրագրի մասին» N Մ-357-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վարդան Պապոյան» ԱԶ-ի հետ (ՀՎՀՀ՝ 57287363) 2013 թվականի ապրիլի 10-ին կնքված N WVA/GUM ADP/INSEM-13/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սերմնավորման աշխատանքների իրականացում՝ 1,746,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 հունիսի 2013 թվականի N Մ- 548 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
5-Ի N Մ-219-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ
ՄԱՍԻՆ («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունիսի 20-ի N 3/3.8-1/8660-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 24-ի N ՎՄ/3-4/7488-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի Գյումրի քաղաքի թիվ 41 դպրոցի երկու սանհանգույցների վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-219-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արսարքտեխ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01002109) 2013 թվականի մայիսի 22-ին կնքված N WVA/GYUM ADP/CW-13/001(RB)/FY13 (2013 թվականի հունիսի 14-ին կնքված N WVA/GYUM ADP/CW-13/001(RB)/FY13 համաձայնագրով ժամկետը երկարացվել է) պայմանագրում նշված

գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 3,079,919 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունիսի 2013 թվականի N Մ - 549 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N Մ-168-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Շեն» բարեգործական
հասարակական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րության 2013 թվականի հունիսի 20-ի N 3/3.8-1/8656-13 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 24-ի N
ՎՄ/3-4/7486-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության
կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն
անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի
«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող
«Օրգանական բանջարեղենի մշակության փորձացուցադրական ուսումնական կենտրոնի
հիմնում» ծրագրի մասին» N Մ-168-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման
հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հրաշք այգի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01809336) 2013 թվականի հունիսի 14-ին
կնքված N 14/06/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տրակտորին
